

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԱԼ ԱՌ


ՏՏՕՐԻՆ. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱՅԻՐԷ (փօսթ ու էսթամբ)

E. TOROSSIAN

Dirag.-prop. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (Égypte)



Poste- restante

ԱՐՇԱԼՈՅՍ

ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐԱԿ	
Տարեկան Փրամբ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԿԻ Ե
ՆՈՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ
ԽՈՒՐԱԳՐՈՒՔԻԱՆՈ ՎՐԱՅ:

ԽՈՒՐԱԳՐՈՒՔԻԱՆՈ ՈՂՂՈՒԱԾ
ԳՐՈՒՔԻԱՆԷ ԵՏ ՀՆԵՑ ՏՐՈՒՐ:

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ՀԱՅ ԿԻՆՆ ՈՒ ՀԱՅ ՄԱՆԿԻԿԸ

« Որբանոցին մանչերը յաճախ թոյլ-տուութիւն խնդրած են կերակուր չ'ուտելու, որպէս զի այդ կերպով խնայուած ուտելիքը թշուառներուն տրուի » կը գրեր թերթ մը՝ իր առաջին տողերուն մէջ:

Այլ չ'կրցայ շարունակել ես ընթերցումս. թերթը քոցեցի ու սկսայ երկար մտածել:

Թէ՛ ո՞վ կրնայ լինիլ մարդկային ընկերութեան առաջնորդը և ո՞վ կարող է դարձի բերել ինկած մարդը՝ իր մոլորումի բազմադիմի ճանապարհներէն:

— Շատ անգամ հայ կինը և մինչև իսկ մեր փոքրիկ մանուկները:

Ինութիւնը մշտնջենական օրէնքի մը անաղարտ պահպանութիւնը ունի իւր ծոցը, որուն մարդ անգամ մը հայելէ յետոյ կըրնայ իր մոռացած պարտականութիւններն յիշել ու հետևիլ:

Արեգակը երկնքի անհուն կամարներէն վար մարդկային բնակութեանն ու հաստատութեանը սահմանուած երկրին վրայ կը ցոլացնէ իր շերտութեան ճառագայթները. հողը՝ որ իր բնական հանգիստն ու քունը վայելելու համար ձմրան ցուրտին կամ ձիւնին սպիտակատարած սաւանին տակ կը կծկուի, իր ծոցին մէջ իրեն յանձնուած անթիւ անհամար զաւակունքը պինդ կերպով սեղմած, յանկարծ կը ժպտի երբ արեգակը ձայն տայ իրեն թէ՛ ահա եկած եմ. ալ անկէ յետոյ երկիրը կը խնդայ, գարունը իր պէս պէս ծաղիկներովը կը փնտի. Աստուած կը դիտէ. և բնութեան հարմիրքի տաղերն ու օրհնութիւնները կը կարգացուին:

Մարդկային խղճի փակ դռները անախորժ ձմռան մը ցուրտ երեկոյթին պէս կրնային միշտ փակ մնալ, եթէ մանուկ՝ բայց զգացումի սրտասարսուռ ճառագայթները մինչև հոն չ'մտնէին ու չ'յուզէին, և հոն պահուող գթութեան արթուն զգայումները կեանք ու ոգևորութիւն չ'ստանային:

Գթութիւնը ծնունդ մ'է, որուն մայրն է ազնիւ հոգին, զի և ու բարձր էութիւնը: Մարդիկ ի ծնէ հպատակ են այդ ազնուութեան այդ գեղեցիկ հոգիին. յորմէ բոլորը շնորհն է միայն սէր:

Բայց յաճախ մարդկային հոգւոյն ու սրտին ապաշնորհ երեկոյթները կը խաբեն

զմեզ, որպէս թէ անոնք տեւական կամ մշտնջենական ծնունդներ եղած լինին, որոց բիրտ ոյժին ու զօրութեանը տակ ընդունուած կամ ըմբռնուած ըլլայ թէ՛ մարդիկ գթոտ չեն. մարդիկ կարեկից չեն:

Սակայն երբէք:

Մի մատաղ հոգի, մի մատաղ արարած որ իր նմաններուն պահպանութեանը տեղ տալու համար կը հրաժարի ուտելիք, ո՞րքան և աւելի կարեկից ու գթոտ կարող է լինիլ մեծ հոգին. մեծ մտածումը. որուն հասուն ըմբռնումներովը դիւրագոյն է փնտռել, գտնել նոյնքան՝ որքանի համար որ կրնայ հասնիլ իր փրկութիւնը. աւելի ևս դէպի թշուառները, դէպի մոռցուածները և դէպի անխնամ որբերը:

Բայց որո՞ւ չ'կարեկցիլ որո՞ւ չ'օգնել, կ'ըսէր, քանի մը տիկիներէ մէկը. երբ միւսը պատասխանեց:

« Ա՛հ, քոյրի՛կս. դուք տեսնայիք թէ ի՞նչպէս մեռուցին. ի՞նչպէս խողովոցեցին: Կատողած, փրփրած այլազգը փողոցին վրայ, մօրը լալագին պաղատանքներուն առջին քարի պէս կարծրասիրտ՝ դեռ հազիւ հինգ տարեկան տղեկը, լուսագնտի պէս՝ գլխի վայր բռնած մերկ խոշորոտ զայն երկունք ընելու. սպառնալիքին տակ, թշուառ մօրը թափած յորդառատ արցունքը մտիկ չէր ընել. ա՛հ, միայն իր մանկիկը ողջ պահելու համար իր հոգին, իր կեանքը կուտար. դուք տեսա՞ք թէ անբաղդ կնոջ, նիւրիմէշի մօր, կտրուած գլուխը ի՞նչպէս արիւնի մէջ կը լողար. ա՛խ քոյրի՛կս. որբ ըսած առանին միթէ այդ մայրերուն թողած, մեզի նուիրած արեւները չե՞ն. տան՛ք, տան՛ք, որի կըլլայ թող ըլլայ. հերիք է որ այդ մայր չունենցողներուն համար է »:

Ահա գեղեցիկ սեռի ցոյց տուած ճանապարհը ուսկից ընթանալու ու է վարանում կամ երկիւղ չպիտի զենենամք բնաւ. քանի որ մեզ առաջնորդողներն են հայ կնոջ և հայ որբացած մանկան արդի վիճակը. մին ընտանեկան քաղցրաշունչ յարկի խարիսխը. միւսը մարդկային կեանքին ապագայ հոգին ու յոյսը. երկունքն ալ իրենց ներշնչումի վեհ ու բարձր զգացումներովը կը հրաւիրեն զմեզ օգնել և փրկութեան ձեռք տալ դէպ ի այն լքեալները, որոց բոլորին ալ մեզ վիճակած է լինիլ հայր, մայր, քոյր և եղբայր:

Արդարև ինչպէս որ ընկերական աշխարհի հորիզոնը կը մթաքնի երբ թշուա-

ռութեան աղաղակները շատնան. այնպէս ալ միևնոյն երկնքին պայծառութիւնը նոր հրապոյր մը կ'զգենու, երբ ժողովրդային միաձայնութիւնը գովելի նպատակներով կը յառաջանան:

Գահիրէի մէջ Որբասիրաց Ընկերութեան հաստատութենէն ի վեր, անոր գովելի ձեռնարկին հետևող այլ ընկերութիւններու կազմութիւնը՝ նոր գրաւական մ'է մեր ժողովրդին զգացումին վառ ու ոգևոր պահպանումին. որոց վեհոգի հետևողը եղաւ դարձեալ, հայ իգական ինքնավստահ սեռը, այս վերջին օրերս ձեռնարկելով « Որբասիրաց Ընկերութեան Տիկնանց դասու մասնաճիւղ » ի մը կազմութեանը:

Մեզ ամենուս պարտք կը մնայ քաջալերել այս բոլոր օգտաշատ ընկերութիւնները. որոնց նպատակի բարձրութիւնը արդէն հաստատուն ապացոյց մ'է մեզ օգնելու այնչափ որչափով որ կրնանք: Որբասիրաց Ընկերութեան Տիկնանց դասու այս կազմութիւնը աւելի դիւրագոյն մասնակցութեան մը գուռ պիտի բանայ ի հարկէ հայ իգական սեռին ամեն կարգի սրտաբուրխ նուէրներուն, որոց ներկայացուցչին ամենալայտնի պատուաւորութիւնը արդէն մեծ վստահութիւն թողած է ամենուրեք գեղեցիկ սեռին մէջ:

Գովելի է որ հայ տիկիները բաժանորդագրութեան հետ բարեհաճին թէ դրամական և թէ որբ մանկիկներու բուն իսկ գործածութեանց յատկացուելիք ու է նիւթերով ալ սատարել Ընկերութեան այս գովելի ձեռնարկներուն:

Կը մնան հայ աղջիկները՝ պաշտեցեալ դասուն շնորհաշատ սրբուհիները, որոց մասններէն կաթկթած գեղեցիկ ու հիւսնալի արտադրութիւնները գերիվեր հրաշքներ պիտի գործեն իրենց փոքրիկ քոյր կամ եղբարց պաշտպան լինելու մեծ պարտականութեանը բամբին մէջ:

Կսպասուի որ հայ օրիորդը գիշերը ցերեկին խառնած նուիրէ իր մասններու շնորհը Որբասիրաց Ընկերութեան որ առաջին անգամ ներկայացողին խոստացուած է կարծեմ, մրցանակի մը արժանաւոր փառքը:

Պէտք է հոգ ալ. պէտք է օգնել. ինչ միջոցաւ ալ որ ըլլայ. առանց որբ ըլլալու, զգալու մէջն է փրկութեան մեծ կարիւրութիւնը: Գանի որ շատ քիչով շատ բան կրնանք ընել, պէտք է որ ուշ չ'մտնենք:

ԱՍՏԴԻԿ

ՆԱՄԱԿ ԿԻՊՐՈՍԵՆ

Նիկոսիոյ հայ գաղթականութիւնն այս տարի արտասովոր փայլով եւ ոգեւորութեամբ անցուց Վարդանանց տօնին օրը Առաւօտուն, հանդիսաւոր պատարագէն վերջ կատարուեցաւ հոգեհանգստի տխուր եւ ազդու պաշտօն մը ի յիշատակ ազգային անմահ նահատակներուն: Կիպրոսի նորընտիր Առաջնորդ Գեր. Պետրոս վարդապետ Սարաճեան որ պատարագին էր, ճարտար եւ յուզիչ քարոզով մը պարզեց օրուան սօնին մեծ նշանակութիւնը, բացատրեց Ս. Վարդանանց պաշտպանած գազախարբ եւ խորապէս սպաւորեց նոցա անձնագործութենէն քաղուելիք դասը:

Ժամերգութեան աւարտովն վերջը, Գեր. Առաջնորդ հօր նախագահութեամբ մրցանակաբաշխութիւնը կատարուեցաւ մանչերու վարժարանին, որ կը գտնուի եկեղեցւոյ բակին մէջ եւ որ Վարդանանց անուան նուիրուած է: Այս վարժարանը կը պարունակէ 25—30 ուսանողներ: Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն Տիար Յարութիւն Ասատուրեան, գարոցի ուսուցիչը, մանկայն գովեստի արժանի է, իր նուիրած անձանքի աշխատութեան եւ յառաջ բերած գիտնափութի արդեանց համար:

Գաղաքիս հայ գաղթականութիւնն այս եկեղեցական, ազգային եւ դպրոցական հանգէնները ցերեկին վայելելէ յետոյ, երեկոյին փութացած էր համախմբուելու ուրիշ ազգային հաստատութեան մը մէջ: Կրթարան-Որբանոցն էր այդ, ուր աշակերտները պիտի ներկայացնէին Թորոս Բ. Լեւոնեան իշխանի թատերգութիւնը: Որբանոցին չէնքը կը փայլէր զուարթ ու գրաւիչ երեւութիւնով մը: Գեղեցիկ պատկերներ, խորհրդաւոր վերտառութիւններ եւ արմաւենիի, մրտենիի եւ այլ ծառերու տերեւներէ պսակներ ու կամարներ կը զարդարէին սրահը, որու մէկ անկիւնն ալ պատրաստուած էր առժամանակեայ բեմ մը: Ժամը ճին երեկոյցը սկսաւ նուազածութեամբ, զոր կը վարէր Տիար Ամարուզ Ժօզէֆին, ազնիւ անձնաւորութիւն մը ու ճարտար վարպետ մը արհեստին: Գաղաքիս վրայ կը նուազէր Օրբորդ Ե. Կիւվէղեան եւ ջութակի ու կիթառի վրայ կ'ընկերանային Օրբորդ Սամուէլեան քոյրեր եւ Օր. Ա. Կիւվէղեան. ամենքն ալ դեռահաս, բայց յոսալից արուեստասէրներ, զորս հանդիսականները կը ծափահարէին յաճախ: Ներկայացումը Կոր կատարուեցաւ կատարեալ յաջողութեամբ մը, խիստ հաճելի անակնկալ մ'եղաւ հանդիսականաց համար եւ պատիւ բերաւ Որբանոցի ուսանողաց, որոնք իրենց դերերը իւրացնելու համար չորս օր միայն ունեցած էին: Ներկայացման վերջին տեսարանը մանաւանդ հմայիչ ներգործութիւն մը թողուց ամենուն վրայ: «Անարգաբայի աղջիկները» հին Կիլիկիոյ նկարագրով տարազներով եկած էին պարելու եւ երգելու ի պատիւ Թորոսի յաղթանակին: Պարը եւ երգը կրկնուեցաւ քանիցս ի խնդրոյ հանդիսականաց, եւ երբ վարդապետը իջաւ, ոչ ոք կ'ուզէր շարժիլ իր աթոռին վրայէն: Երկար ատեն, ամեն մտրի մէջ մարմնացած կը մնար այդ նաղելի հայուհիներու տեսարանը, ու ամեն ակնալի մէջ կը հնչուէր եռանդազգին պարերգին յանկերգը.

Սե՛ւ լեռներ, սե՛ւ լեռներ,
Ահա հո՛ն են մեր լեռներ,
Մո՛ւթ ամպեր, սե՛ւ ամպեր,
Բարեւ տարէք մեր տներ:

Թուով սահմանափակ եւ մասամբ ալ նոր գաղթականներէ բաղկացած հասարակութենէ մը չէր սպասուէր զրամական մեծ նպաստ մը, իբր հասոյթ ներկայացման Մախրերը գեղյուելով, վեց ոսկի միայն մնաց Որբանոցին, բայց բարոյական շահը, Կիպրոսցիներուն արդէն չ'սիրելի եղող այս Որբանոցին համար գոյացած հովանակրական եւ գնահատական զգացումը՝ շատ մեծ էր:

Չը մոռնամ յիշել որ յաւարտ ներկայացման Որբանոցին Տնօրէնը, Տիար Վ. Քիւրճեան, հրապարակաւ շնորհակալութիւններ յայտնեց առ Գեր. Առաջնորդ Հայրն, որ հաճած էր ամեն ջանք նուիրելու տոմսակներու սպառման համար, նոյնպէս առ այն տիկիներն ու օրբորդներն՝ որոնք ներկայացման զգեստուց վաղընդփոյթ պատրաստութեան համար իրենց սիրայօժար ջանքերը նուիրած էին:

Թ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊԵՆԵԱՆ

Քանի մը տարիէն, Տիկին Պէնեան եւ՝ հին դէմքերու կարգը պիտի անցնի. և ամեն պնջնք որ տեսած են զայն բեմին վրայ և հաւնած՝ անոր բեմական ասպարէզին մէջ ցոյց տուած յաջողակութեանը, պիտի ըսեն:

«Տիկին Մարի իբր յաջողակ դերասանուհի, երկար տարիներ հայ բեմը փայլեցնելէ և անոր ամենափայլուն աստղերէն մին ըլլալէ վերջ ծերացած, կը թողու իր ասպարէզը. պէտք է անոր ծերութեան օրերուն մէջ մխիթարել զինքն, քանի որ նա ա՛յնչպիսի ձիգ տարիներ իւր ընտրած ասպարէզովը շատ գնահատելի ծառայութիւններ մատուցած է ազգին, և այլն և այլն»:

Այս երէմիականներուն պիտի միանայ գործունէութիւն մը: Ինքզինքը ազգին օգտակար և անոր աշխատաւորներուն վրայ հոգածութիւն ունենալ կեղծողներուն ամենակեղծ գործունէութիւնն է այս՝ որուն միջոցաւ ժողովուրդին համարումը վաստակելի և իրենց փառապիտանութեանը գոհացում տալ պիտի ուզեն:

Այսպէս վարժուած էնք, և այդ կեղծաւորներու վճռական ալ, մեզի այս ձեռով խաբած է միշտ և մեր անկեղծ համարումը վայելած:

Սխալ է մեր այս դրութիւնը, զնա մեռել, եկուր սիրելու Մենք որ եթէ աւելի յառաջ դիմելու փափաքը ունինք, պէտք է որ այդ կարգի արհեստաւորները իրենց երկտասարդութեան ժամանակ քաջալերենք և մեր ընծայած դիւրութիւններով ստիպենք զանոնք՝ որպէսզի իրենք ալ իրենց ասպարէզը բարձրացնելու ջանան:

Հիմակ ուրեմն ժամանակն է ըսել թէ՛ Տիկին Մարի Պէնեան, առաջիկայ ուրբաթ Ապրիլ ճին իր տարեկան նպաստը պիտի ներկայացնէ Եգիպտական թատրոնին մէջ:

Խաղին ընտրութիւնը կատարուած է ամենէն լաւագոյնին վրայ:

ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԵՐ

Ինչ որ մինչև ցարդ կը պակսէր և թերեւս դեռ շատ ատեն ալ պակսի Եգիպտական երկու ուղտաններու մէջէն:

Առաջին անգամն է որ պիտի ներկայացուի այս խաղը Գահրիէի մէջ, և առիթն է հաւաքակի որ թատերասէր հայ հասարակութիւնը փութայ քաջալերել մեր բաւական տարիներու աշխատաւորը՝ Տիկին Պէնեան:

ԱՐԿՈՍ

ԱՂԵՔԱՍՆՊԻՈՅ ՈՃԻՐԸ

ԵՂՔԱՍՆԱՍՊԱՍԻՆ ԿՆՈՋ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Ատենակալ Մուհամմէտ պէյ Սաքիտ, երեքշաբթի Լապպանի ոստիկանատունը գնաց, իր քննութիւնը շարունակելու համար. և կանչել տուաւ ժան Անկէլաթօի կիներ՝ որ դատաւորին զինքը կանչելու պահուն հանդարտօրէն կը քննարար:

Այս թիկնեց և հուժկու կիներ բնիկ Կիպրոսցի էր. 40 տարեկանի մօտ. ձերբակալ-

ուած օրը շատ գունատ էր՝ երբ դատաւորին առջև բերուեցաւ: Բայց ինքզինքը շփոթած ցոյց չէր տար: Ներս բերուածին պէս դատաւորը իւր դիւանապետին ներկայութեանը հարցուց.

— Ի՞նչ գիտես այն ոճրի մասին, որուն հեղինակը քու ամուսինդ է:

— Ահաւասիկ ինչ որ գիտեմ. պատասխանեց կիներ հըլութեամբ. «Կիւրակէ 18 Մարտ, ամուսինս կանչեց մեր պղտիկ աղախինը, Էմէլինա, և տղաքը պտրտցնելու զրկեց: Աղախինը իրեն մի քանի մանր աշխատութիւնները լրացնելէ վերջ մեկնեցաւ: Ի՞նչ յետոյ, ամուսինս ժան, Չէնուպա անունով արար ծառան կանչեց ըսելով. «Գնա՛, գտիր եղբայրս և ըսէ որ անմիջապէս մեր տունը գալ. որովհետեւ ամենակարևոր խօսելիքներ ունիմ իրեն հետ»:

«Ծառան մեկնեցաւ և տագրս ժամը Յին հասնելով, մեր յարկը ելաւ:

«Ցուրտ կերպով, սուրական բարեւները տալէ վերջ՝ Պ. Բարասքօ սկսաւ հասարակ նիւթերու վրայ խօսիլ: Ամուսինս ընդհուպ խօսքին նիւթը փոխելով, հօրը յիշատակները արթնցուց և հարստութեան անարդար բաժանման վրայ բերաւ. քանի մը վայրկեան վերջ՝ երկու եղբայրներն ալ գրգռուած, կատաղի բարկութեան մը մէջ էին, վայրկեան մը յետոյ, ամուսինս ոտքի ելաւ և դանակի հարուածով մը կոկորդէն զարկաւ իւր եղբայրը:

« Պ. Բարասքօ թաւալեցաւ, յետոյ կայտաղի ջանքով մը ոտքի ելնելով ամուսնոյ վրայ յարձակեցաւ և աղաներովը անոր ձեռքը խածաւ, բայց արիւնահոսութեան ուժասպառ նուազեցաւ և կապուտցած գետնին վրայ ասարածուեցաւ, արեան լճի մը մէջ... մեռած էր: Օգնութիւն աղաղակել ուզեցի, բայց ամուսինս ձեռքովը բերանս սխմելով, զգուշացուց զիս թէ ամեն ինչ անօգուտ է, թէ՛ ամեն բան լմնցած է:

Ի՞նչ կրնայի ընել: Հակառակ իմ վրշտիս և զայրոյթիս, հակառակ դիակի մը դպչելու համար զգացած նողկանքիս, ամուսնոյ օգնեցի, յուսալով որ այսպէս ոճիրը ծածկելով՝ պիտի փրկէի զաւակացս սպառազան:

«Ժան և ես տանիքը փոխադրեցինք դիակը և ժան դանակներով կանոնաւորապէս մարմինը պղտիկ կտորներու վերածեց և ոսկորները կացինի հարբածներով կոտորուեց: Ահաւասիկ ամենը»:

— Ատենակալը հարցուց թէ՛ մենք դանակները գտանք, բայց ո՞ւր է կացինը:

— Տունը իմ սենեակիս մէջ է: Յետոյ կիներ շարունակեց. «Ժան և ես — ես՝ որ այն ատեն մեռեալ մ'էի քան թէ կենդանի — մարմնոյն մէկ մասը վար իջեցնելով ճեմիչը նետեցինք և տան մէջ գտնուած կիլէն լեյուցինք բեկորներուն վրայ, յետոյ գլուխը և ոսկորները պայուսակի մը մէջ զետեղեցինք և հուսկ ապա՝ մեր յարկը և տանիքը լուացինք արեան ամենափոքրիկ թիճերն անգամ անհետացնելու պայմանաւ:»

«Զոհին հագուստները ի՞նչ եղան, հարցուց դատաւորը: Զոհմասա միտոյս»

Աներևութացնելու համար ամուսինս մէկտեղ առաւ զոհին վերարկուն, բաճկոնը և անդրավարտիքը և ինծի ձգեց ժամացոյցը և բանթալոնը :

— Ուր են այս առարկաները :

— Ժամացոյցը արար ծառային միջոցաւ ժամագործի մը քով ձգուած է և բանթալոնը տղան է :

— Ուրիչ հագուստ չունէ՞ր :

— Արիւնով ծածկուած ֆանելա մը կ'իմր, զոր լուացի առանց կարենալ ջնջելու արեան բիծերը :

— Բան մը չ'մոռցա՞ր :

— Այո՛, այո՛, գոչեց կինը, հանգուցեային կնիքը կար, որ ամուսինս գրպանէն հանելով պահեց և տունը կը գտնուի :

Օկիւսգին, — այս էր կնոջ անունը — իրեն եղած շատ մը հարցումներուն պատասխանեց թէ ատկէ աւելի բան մը չէր գիտեր :

Հարցաքննութիւնը վերջացաւ :

Քիչ մը վերջը Ատենակալը, ժան Անկէլաթօին տունը գնաց, ուր գտաւ կացինը որ ծառայած էր դիակին սուկալի անդամատութեանը, յետոյ բանթալոնը և կնիքը :

Ժամացոյցը գտնուեցաւ ժամագործին քովէն, ուր ձգուած էր: Անկէլաթօ Լապպանի ոստիկանութեան խցիկներէն միոյն մէջ միշտ փակուած կը մնայ :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ԼՈՆՏՐԱ, 27 Մարտ. — Տըպլընի ծովածոցին մէջ պիտի սպասէ Մանչի նաւատուբերը որչափ ատեն որ թագուհին իր անտառ մնայ :

ԼՈՆՏՐԱ, 27 Մարտ. — Ռուսական նաւատորմի ճիւղերը հասաւ ձարոնի մէջ սրտնեղութիւն մը կը տիրէ այս մասին և Ռուսական այս գործունէութիւնը Մազանֆօի մէջ հողային առանձնաշնորհում մը ձեռք բերելու կը վերագրուի :

ԼՈՆՏՐԱ, 28 Մարտ. — Պ. Ա. Միլնէր Պոէմֆօնթայն հասաւ : Աւստրալեան գաղթականութեանց գլխաւոր նախարարները համաձայնած են Պ. Չէմպրէյնի հեռագրելու համար թէ չեն ցանկար որ խաղաղութիւնը հաստատուի. եթէ նա չ'գրուի այնպիսի խարսխի մը վրայ, որը կարենայ երաշխաւորել Մեծն Բրիտանիոյ բացարձակ գերիշխանութիւնը հարաւային Աֆրիկէի մէջ :

ԼՈՆՏՐԱ, 28 Մարտ. — Լէսի-Պրանտը վերագրուող Օլիէլէն չէ, այլ կրօնթէր: Կը կարծուի թէ Օլիէլէն զորավարը հալածուածներուն մէջ չ'գտնուիր :

ԲՐԷՅԻՌԻՍ, 28 Մարտ. — Օրանի Պետութեան հարաւային կողմը գտնուող բոլոր հրամանատարները ողջամբ դէպի հիւսիս, Թապան-Շիւ, ժամանեցին և ապահովութեան մէջ են :

ԲՐԷՅԻՌԻՍ, 28 Մարտ. — Զօրավար Ժիւպէր երեկ երեկոյ մեռաւ ստամոքսի հիւանդութենէ մը, որով կը տառապէր երկար ատենէ ի վեր :

Բոլոր քաղաքը սուգի մէջ է :

Կը կարծուի թէ Նախագահ Քրիւկէր պիտի ստանձնէ զօրագունդերուն վերին հրամանատարութիւնը : Զօրավար Տըլարէյ անկողնոյ կը ծառայէ և Զօրավար Շմիւթ կը հրամայէ Թրանսլալական զօրաց :

Ա.Ձ.Դ

Պատուաւոր տան մը մէջ ծառայելու համար սպասուհիի մը պէտքը կայ. դիմել Շարա Ապտիւ Ազիզ Տիար Կ. Երզնկացեանի խանութը :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 30 ՄԱՐՏ 1900					
8649	4927	5651	3252	934	2264
6142	8160	1531	6355	6850	2168
5716	2787	4647	2100	4380	6638
4951	3043	3919	6353	1327	1170
		9607	2129	3904	

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

«Արշալոյս»-ի թիւ 67 թերթի այն սողերուն՝ որ կրտսեր, «Տիար փրկիպոս թողարար»-ի բացած դասն, խառն դատարանի կողմէ չի նշպատու պարտն սէր աղանձանի վճռուած է :

Սուկալի թիւրիմացութիւն մ'է այս, դա՞ծի մը պարզ յետաձգումն ո՛րեւէ ի նպատակ վճռում մը չ'պարունակեր իւր մէջ, դատարանին վճռած է թէ աղջիկ մը իւր 18րդ տարին թեւակոխելէ վերջ կարող է օրինական դատ վարել. որոյ մէջ շահեջու ոչ մի իմաստ արտածելէ դուրս, նոր դատ մ'ալ մղելու իրաւունք կուտայ, այժմիքն մինչ աղջկայ 18րդ տարուն ողջունելն՝ մնացեալ մէկ կամ մէկուկէս տարուոյ պարէնն պահանջել զնէ բերել տուողէն, որոյ քանի մը նախակներն զայն կը զրկէ ուրաստն իրեն ապաստան քունեկալէ թէ՛ ինքն չէ ուղղած ալն աղջիկն հետաւոր երկրէ մը՝ Եւ երբ պարտն դեր աղանձան զայս չուրանալու չաղնուութիւնն ունի, հապա ինչ դեր էր այս, որ խաղացինքն իր գլխուն և իւր պատուոյ թեկերուն վրայ: Բովանդակ խնդիրն մեկնող երկու հարցեր իրենց մէջ կը պարունակեն նշանակութիւն մը՝ ճշմա-

րիտ, պարզ և մեկին Ա. թէ ինչո՞ւ գրծեց իւր խօստուան առանց բանաւոր պատճառի Սա թեւրեւս գաղտնիք մ'է շատերու հանդէպ, թող լուսաբանուի ուրիմն: Պարտն տ. աղանձան այն ինչ սիգալով աստ անդ կը ճոռմէր բարեպաշտ քրիստոնէի մը հովեր առած թէ իւր միակ գուկին, փաբաւորներու երկրէն հեռու գոգ թէ կարօտեալ արբուկ մը նու կընտրէր ճաշա մեծատան մը փքոյուտոյց կուրծքի տակէն քաղցրաւէտ յոյսեր գործչացած կը ցնդին սանդուխներէն ի վեր, նոր եւ փնջունն ինսամութիւն մը նաւթճեղով. արդ՝ Պարտն տ. աղանձան յափշտակեալ և մագնիսեալ կենեղու մ ժպիտներէ, կը մտածէ, բայց անմզան. արգիլել որբուկի ճանապարհորդութիւնն, որ նոր բաժնուած իւր աւերակ հայրենեաց գրկիւն և շիջելափառ մօր մը զնդացող բազուկներու մէջէն արտասուածոր աչքերով լեռ, սար ու ձոր կ'ընթանայ նուերուելու գրծողի մը ննդապատիր և զաղփաղիւն հեռ ուխտին. հապա ինչ ընել էր ուզէ արգիլումն. բուռ մը ձեռքէ վիսխցնելու տենդով տողորուած կը սարքէ իւր մտաց մէջ թէ աղջկն առաջին տեսնելուն զայն փոքր կը համարի և այլն : Ինչ որ բաւ, և և առ յապայն ընտրեց մեծափարթամի մը ճոխօժիտ դուստրն աւելի մատող քան դառաջինն :

Ո՞վ չխոստովանիր թէ արքաներ, իշխաններ, հականեր և հերոսներ իսկ նուաւագին կը խոնարհին այն Դիոնիսի պատգամաւորին առջեւ. մինչ երբ որ դոցանէ և ոչ մին է, ինչ փոթ թէ խոստումն ժխտած ըլլայ, թէ խղճին դէմ մեղանչած ըլլայ, թէ պատին առաթուր կոխոտած ըլլայ. բաւ է որ... : Միայն դարմանայի է թէ, այս երկու խեղճ արարածները երկար տարիներէ ի վեր մէկ բնակարանի մէջ բնակելով հանդերձ, դեռ չէին գիտեր թէ մին արբուն դուստր ունի, միւսն պարման երիտասարդ, և ահա հէնց այս կէտին... :

Բ. Թէ ինչո՞ւ խնդիրն դատի ու դատաստանի ենթակայ եղաւ : Ոչ ոք ստիպեց իրեն, իւր խօսան ի գլուխ հանել, այլ պահանջուեցաւ արժանի ու համեստ ծախս մը՝ զնէ յիւր հայրենիս վերադարձնելու համար, որն Պ. տ. աղանձան մերժելէ դատ, յաւակնեցաւ հոս բերել տալու համար ճամբած չնչին հինգ ոսկուոյ գումարն իսկ յետս պահանջել : Կարծեմ ամեն ոք բացայայտ իրազեկ պիտի լինի այժմ թէ ինչ էր առիթն որ խնդիրն դատի վերածեց, և չսպասելով մէկ կամ մէկուկէս տարի վերջ դատարանի տալիք վճռոյն. թո՛ղ ամեն մարդ այժմէն վճռէ իւր սրտին մէջ, իրաւունքը և արդարութիւնը :

Պահիրէի մէջ յարաճուն խրտուք մը կայ Առաջնորդարանի անուան շուրջն սաւառնող. բայց նա միշտ արձանի մը պէս անտարբեր կեցած կ'անքօսնէ իւր շուրջ դարձած բոլոր իրաւ և անիրաւ բողոքներն : Նախ քան զդատարանն, Մեծապատիւ Եղբարք Շահրոզեան՝ խղճի օրինօք զինեալ բողոք բարձան Առաջնորդարանի, դրուծանի մը խանս ու քարուակ ընթացքին դէմ. բայց Առաջնորդարանն ստուգանքեց նոցա ձայններն առանց նարկ մը նետելու թէ ինչ տպաւորութիւն պիտի ձգէ ժողովրդեան վրայ և ապառաժի վրայ կառչած հունտի մը պէս անարգաւանդ մնաց ցարդ բողոքագիրն, բողոք մը՝ զը այժմ մեկին էր և իրեն եւեթ պատշաճեալ. բայց ինչո՞ւ չլսեց Ս.յս հարցմանն ճշգրիտ պատասխանն Պ. տ. աղանձան միայն կրնայ տալ. իսկ ես կ'երջանում որ

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՀԻ ԱՍԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեաներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեաներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԵՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէն աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. ՍԱԸՔՍԱՆԳՐԻԱ :

նա պիտի ընդհանուր առաջին ընդհանուր, եթէ որ-
քան անհատական չունենալով հուսկ ծանրացած
ըլլար ազգի վրին. ո՛հ այն ատեն, սոսկալի կեր-
պով յայտի դատաւարտուէր այն մեցամէս զլուին,
ուրիշ գայթակղութիւն միայն կը հոտի:

Այ, աշխարհի նախատինքներ, սանդարամետի
գաւապիքներ. մի՛ պիտոտէք կենաց փայլուն հո-
քիզները մի մրտոտէք մարդկութեան փառփիւն ճա-
կատն ու պարծի՛ հոգին: Եւ դուք աւելի ալեծա-
ղիկ հայրեր, դուք որ փորձառու հայրեր էք,
հայրական փորձ ուշիմութեամբ աշակուրջ առաջ-
նորքն եղիք ձեր անփորձ մատաղներու: Գորք,
որ ընտանեաց նաւուն ղեկավար էք, հանձնարով
վարեցէք ձեր ղեկն, զի չբաղխէք զայն անհեթեթ
ժայռի մը եւ ծայրակտուր դարձած իւրաքանչիւր
ձիւր մոլորութեանց ովկէանի քառային ալբերն-
զուք, որ պարտիք ձեր ապագայ սերնդին դեռ-խա-
ղաւարտ վէրքերուն բալասան ճարել եւ ամբել
զայն այժմէն իսկ. ժամը մի՛ ցանկէք հոն անգթա-
բար, ի լուսանա ձեր յետագայ նմաններ: Գորք,
որ մարդկութեան հայելին էք, թո՛ղ աղածիթ
մարդկութիւնն ձեր վճռութեան մէջ նայելով
ուղիղ իւր մոլոր ընթացքն:

Ո՛հ, ցաւալի է այն ատեն, երբ ալեւոր հայ-
րեր մոլորած իրենց քայլերէն, առաջնորդ կ'որո-
նեն երեսաներու խումբի մէջ: Ինքզինք սուսնե-
լու եւ յարգարելու անատակ, օձահեռ Եւաներէ
կը յարգարուի շատ անգամ, իւր նաւու ղեկն վա-
րելու անկարող կամ անիօթ կը մատնուի լեռի-
նաթինթ փոթորկաց ձեռքն եւ կը սուզի անհրա-
գօշ ալեաց յատակն:

Արդ, ձեզ այլի՛ ըսեմ, ո՛ր երիտասարդք, դուք այլ
եղս երեխաներ չէք, ընտելեան ձեզ կենք տուաւ
որ չնչէք, կամք տուաւ որ գործէք, խելք տուաւ
որ խորհիք եւ ընտրէք, միտք տուաւ որ զգաք եւ
գատէք, լեզու տուաւ որ զայնս արտայայտէք եւ
պաշտպանէք ձեր ճշմարին դասն: Ուրեմն, երբ
ձեր մեծեր մոլորած են, մի՛ հետեւիք նոցա կու-
րաբար: Ենչեցէք իբրեւ բանական էակ, խորհե-
ցէք եւ ընտրեցէք տաղանդով, գործեցէք ողջա-
խոհ եւ ազատ կամօք, զգացէք եւ գատեցէք նըր-
բագին, խսեցէք ճշմարտան ազատօրէն, տեսէք
եւ ճանչցէք շարն ու բարին, պարզ հանդիսատես
մը մի ըլլաք. ձեր շուրջ եւ միջոցաբանն ձեր ա-
նունու ու բարոյի վրայ լարուած փոխհետեւումը միշտ
հետեւող մի ըլլաք, յանձնելով ձեր կամքն օտա-
րաց ձեռքն «Թէեւ ըլլայ ծնողք» եւ սանձարկեալ
վարուիք գուցէ անձարակ ձեռքէ մը: Ականաւորն
Քինէ իւր մէկ երկին մէջ հետեւեալ հանձնարող
խօսքն կ'ըսէ. «Կամք ունենալն զաղափար ունե-
նալ չնշանակիր եւ շատ անգամ զայն չունենալ
իսկ կը նշանակէ»:

Ի՛նչ ապացոյց թէ խնդրոյս առարկայ խօս-
նայրն առաջինն սիրեց եւ վերջինն ատեց, կամ
վերջինն սիրեց եւ առաջինն ատեց, ահա կամք
մը առանց իտէականի . . .

Պ. Ժ.

ՏՈՐՈՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամբարոյ

Ապոստոլ Եւրոպայի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակուսներ:

Կը գազարեցնէ վայրկենապէս ակուսի ցա-
ւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած գեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուսներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի գարմանում,
ամէն օր կէսօրէ ետք ժամը 5-5:

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչեւ ցարդ սովորութիւն չէ եղած կամ
քիչ պատահած է, որ հայ թերթերու վարչութիւն-
ներն մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստէյ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ
թիւր կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ
մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ գանձել
անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս» ի հրատարակման առաջին
օրէն մեր սպառուիին քանակը ի նկատի ունենա-
լով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքա-
ծոյի համար աւելի տպագրել տուած եւ առաջին
վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Ար-
շալոյս» ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ,
կրնան զիմել թերթիս ՏՆՕԹԻՆՈՒԹԵԱՆ:

Լաթակաղաղմն համար 10 Ֆրանքի գումար մը
ղրկելով մեզ:

Գարձեալ արտասահմանի ո՛ր եւ թերթի բա-
ժանորդ գրուի փափաքողներէն անոնք որ ղե-
րութիւնը չունին անոնց խմբագրութեանց հետ
յարաբերութեան մտնելու, կրնան մեզի գրել:

Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԻԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՊՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ երկար տարի-
ներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու
առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարու-
նակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ
վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քա-
նակութեամբ ապսպրանք տուած է եւ յետ այսու
մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի վեղջեալ
գնեցող պիտի վաճառէ:

Իրեն զիմող գնորդները կատարելապէս գո-
հացնելու եւ մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջը
տեղի ունեցած դժգոհութիւնները բառնալու հա-
մար մեծ հոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք
որ Ա. Պարտէսի պիտիներ ունին իրենց թով, մի՛ չիւ-
վերջին Գլխաւ յիշեցողք հանդերձ իրենց պիտի
ղրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղիս է Մուսքիի մէջ Պ. ԳՕՆՕ-
ՄՕԹ Պանքան:

Սոյն տոմսերէն պիտի ծախուին նաեւ ի Մուս-
քի, Տիար Գ. Պարզեանի խանութն:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու
գիները:

Համպուրկի՝ 7 Գլխա. իւրաքանչիւրը 13 1)Ձէն.
— ամբողջ 94 1)Ձ:

Պրոնսվիկի՝ 6 Գլխա. իւրաքանչիւրը 16 զրուշէն.
— ամբողջ 96:

Հունգարական՝ 6 Գլխա. իւրաքանչիւրը 17
զրուշէն. — ամբողջ 102:

ՄԱՆՕԹ.— Հունգարական տոմսերու Ա. Գլխաի
թիւերը արդէն հասած են եւ հրապարակ ելած:
1—8

ՀԱՅ ԳԵՐՉԱԿ

ՏԻՐԱՆ ՀԻՒՐՄԻԻԶԵԱՆ

Շարէ Մօհամէտ Ալի Վիզթորիա դեղաբանին քով

Այս անգամ՝ նորաձեւութեանց և ճա-
շակի յարմար իր ըրած նոր ապսպրանքներն
հասած ըլլալով, իրեն զիմող յաճախորդաց
ձեւուոր հազուատներ պատրաստել կը խոս-
տանայ խիստ չափաւոր գներով:

Անգամ մը փորձելու համար հոն գի-
մողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի
և ամեն անգամ ձեւուոր հազուատ ունե-
նալու համար դարձեալ հոն պիտի դիմէ:
3—3

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Սուգ-ի Պաք վանառասան մօտերը, Կամե-էլ-Պեհաթի
ճիւղ զիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր
յաճախորդներէ գտած ընդունելութիւն-
ներէն քաջալերուած, պատիւ ունին յայ-
տարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատ-
րաստուած ընտիր հացերը զուտ և անխար-
դախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ
գաղղիական, անդղիական, գերմանական և
յունական հացեր պիտի պատրաստուին,
իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայ-
մանաւ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով
պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի
պարսիմաթներ և այլն:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յայնձ-
նարարութիւնը ամենայն ճշ դուրեմամբ և
փութով կը կատարուին: 44—50

ԿՈՊԷՌՈՒ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լու-
սանկարչատուններու մէջ աշխատելով, արեւստին
ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն
ստացած է:

Պօլսոյ մէջ Ապտիլլահ եղբարց տան, ինչպէս
եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ
վերջին անգամ Լէքէճեմն գործատան մէջ ամենա-
կարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործա-
տեղի մը կը հիմնէ Էգպիֆիէ Եարիս Գամիել Օ-
թէլ ՇէֆէրՏՍԻ ճիւղ զիմաց թիւ 3 արարթըմա-
նին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-
նկարներ, ինչպէս եւ գուրք կղափներ ի հարկին:

Ակրանթարման բնական մեծութեամբ:

Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, ո-
րոնք երբէք չեն աւրուի:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ
բնական գոյներով միկեաթիլ:

Իւղաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերա-
բերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր
բուքսէվիթըման եւլն:

Իրեն զիմող յաճախորդներն հանել տուած
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը
նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Գիմեցէ՛ք եւ կատարելապէս գոհ պիտի մնաք:

ԳԻՐԻ ՌԻԶՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չրվակայից գրասէր Հայ
հասարակութեան ղեկուղիւն մը տալու
մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն
գիրք, (Դասական, Դպրոցական, Գիտական,
Գրական, Արտեսական, Բանասիրական,
Վիդական եւ այլն) որ հրատարակուած են
և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երու-
սաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա,
կարելի է գիւրամատչելի պայմաններով
ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասար-
դեանի, Գալստեան վարժարան հայոց
ի Գահիրէ: